«ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

0015, ք.Երևան, Զաքիյան 10, հեռ.՝ (+374 10) 56-14-21, էլ.փոստ՝ agency@spm.am

«09» հունվարի 2024թ.

N Ե- 07

«ՄՈՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ ԱՐՄԱՆ ՄԱՐԱԲՅԱՆԻՆ
/հասցե ք.Երևան,Դավթաշեն 2թղմ, 37$_2$ 31, էլ. փոստ Monargroup23@gmail.com/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի (ամբողջությամբ) լուծելու մասին

Հարգելի պարոն Մարաբյան

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի և «ՄՈՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ միջև 28.12.2023թ կնքվել է «ԳԳԱԿ-ԳՀԾՁԲ-24/1/Վ» ծածկագրով «Վերելակների վերանորոգման և պահպանման ծառայությունների» ձեռք բերման պայմանագիր, ըստ որի պետք է մատուցվեր Կառավարական 2-րդ, Կառավարական 3-րդ, Նալբանդյան 28 և Արշակունյաց 4 հասցեում տեղակայված թվով 20 վերելակների վերանորոգման և պահպանման ծառայություններ:

1.1 կետի համաձայն Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Վերելակների վերանորոգման և պահպանման ծառայությունների» մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով պայմանագրի կատարման ժամկետ է սահմանված՝ պայմանագրերն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2024թ.ներառյալ:

Համաձայն Ձեր 08.01.2024թ գրության «ՄՈՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հրաժարվում է մատուցել «ԳԳԱԿ-ԳՀԾՁԲ-24/1/Վ» պայմանագրով նախատեսված ծառայությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՄՈՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«ՄՈՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տրվում է 10 օրացույցային օր տուժանքով սահմանված գումարները՝ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովման 1.512.000 /մեկ միլիոն հինգ հարյուր տասներկու հազար/ ՀՀ դրամ և պայմանագրի կատարման ապահովման 1.008.000 / մեկ միլիոն ութ հազար/ ՀՀ դրամ, «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի ՀՀ ՖՆ գործառնական վարչություն 900018002981 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «ՄՈՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումը կուղարկվի լիազորված մարմնին, իսկ «ՄՈՆԱՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը՝ պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում, սահմանված կարգով կներկայացվի «Էվոկաբանկ» ՓԲԸ վերոնշյալ գումարները գանձելու և «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի ՀՀ ՖՆ գործառնական վարչություն 900018002981 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐԱ ԽԼՈՅԱՆ

Կատարող՝ Արմինե Միրումյան
ֆինանսական և հաշվապահական հաշվառման
վարչության պետի տեղակալ
Հեռ.՝ (010) 54-07-34